Պատմ. Երեւի թէ հնուց ի վեր Մարաց Իշխանութեան սակ էր այս ընդարձակ երկիրը եւ Կիրոսի ասեակն ԼՁ. դար Ն. քան զՔս. Ա կսկսի իւր անկախութեան պատմութիւնը. Գարեհներու, Քսերքսէսներու եւ այլոց ժամանակաց մէջ՝ կը տեսնուի այս Պետութեան անազին ընդարձակութիւնը, որ մինչեւ Հնդկաց, Կասպից, Պոնտոսեան եւ Միջերկրեայ Օղովերու կը տարածուէր. իսկ Սասանեանց ժամանակէն մինչեւ Արաբացոց արտաւանաց ասեմ անկախ կը սկսեալայ, որ *Պարթևական* անունն անգամ անհետանալով *Իրանականի* կը վախճուի. բայց առաւել եւս կը սեղմուի ներկայ դարուս մէջ: Երկրիս ու Հայաստանի վերաբերեալ պատմութեան մասն արիւնդուուես է, բայց անոր վերայ խօսելու տեղնալ նոս չէ:

Միապետական Կառավարութիւն
Կրօնք մահմետականութիւն

Կայսր, **Նասր-է-Տին Շահ.** Ծնեալ 1830. Գահակալէ ի 10 սեպտ. 1848.

Գրօց. Սպիտակ ընդ Արեգքարն ոսկեգոյն առիւծու, եւ կանաչ շրջանակալ.

Առաջին եւ Արսաֆին գործոց Նախարար,
Հանի Միրզա Հիւսէյին Խան.

Մայրաքաղ.	Գեհրան.	Բնակ.	90,000
Մէծ քաղաք	Դարեժ	»	120,000
»	Մէսհէտ	»	70,000
»	Իսպահան	»	60,000
»	Եզ	»	35,009
»	Համասան	»	35,000
»	Շիրազ	»	20,000
»	Ասդարապաս	»	20,000
»	Պէհլէրապաս	»	20,000

Թիւ բնակչաց երկրին 6,000,000

Զօրութիւն

Սպարապետ,	Նախդ-է-Սալթան,	
Կայսերազն իշխան.		
Թիւ Զօրաց, ի խաղաղութեան		27,000
»	» ի պատերազմի	60,000

ԳԱՆՁ

Եկամուտ եւ Ծախք Կառավարութեան
Ելք եւ Մուտք. Թուական 4,800,000

Վաճառականութիւն

Ելք Ապրանաց Թում. 2,500,000
Մուտք -» 4,250,000

ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆՔ

ՊԱՐՍԿԱԿԱՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Դեպքան լիակատար, **Մօհսին** Խան.
Խորհրդական դեպք. Ներիման Խան.
Քարտուղար Ա. Հանի Միրզա Նեհեձ Ալի
Թարգման, Միրզա Ռիզա Խան.
Հիւպատոս, Միրզա Ճալալ Խան

ՕՍՄԱՆԵԱՆ Ի ԹԷՀՐԱՆ

Դեպքան լիակատար, **Միւրադ** Էմէնսի.
Քարտուղար Ա. Խանաբլի Պէյ.
» Բ. Գախարա Էմէնսի.
Օգնական Ժուաճ Պէյ.



Պ Է Լ Ճ Ի Ք Ս.



Պատմ. Հիւսիսային Գերմանական
ցեղի Երկիրն մէկ մասն է այս. որոյ բնա-
կիչք ամէն ժողովուրդներէ աւելի սաս-
կութեամբ դիմադրեցին Հռովմայեցոց
արշաւանաց. Յուլիոսէ սկսելով Բանի
Բանի Կեսարներու ընդդիմացաւ այս
անհանդարտ եւ *usահայ* ժողովուրդը.
(Հռովմայեցիք այս անունը կոստային
հայրենասիրաց, ինչպէս որ Տակիսնոս ալ
ըսած է Հայոց նամար): Հին Գաղղիացոց
սիրող Ծռանգք ու Գարլովէնկեանք այս
ցեղէն էին. Մեծին Կարոյտի ատեն Երկիրս
Լառէնեանց Դիւտութեան մասին մէջ
մտաւ. Իսկ ԺԵ. դարու մէջ Պարկոնյի
Դիւտութեան, ընդ որ եւ Սպանիոյ իսլա-
մութեան զսկ ընկաւ. յետոյ Ծռանասայի
(1801) անցաւ. բայց 1815 ին Ստրին գա-

ւառաց թագաւորութեան մասին յարեցաւ: Պէլճիքա Հոլանտայէն պատերազմաւ (1831) բաժնուեցաւ եւ անկախ թագաւորութիւն կազմեց:

Սահմանադր. Կառավարութիւն

Կրօնք կաթոլիկութիւն

Թագաւոր. **Լեօփոլս Բ.**—Ծն. 9 Ապր. 1835 Ամուսն. ընդ *Մարի Հանրիէթի* (Ծն. Արքիդքսոնի Աւս. ի 22 օգոս. 1853). —Գահակ. ի 10 դեկտեմբեր 1865.

Դրօշ. եռագոյն՝ սեւ, դեղին եւ կարմիր, սեւան դրօշակալի կից ուղանայեաց դրիւք

Առաջին նախարար, Պարօն **Նորմազ Արս. Գործ.** Կոմս **Ասփրբան-Էլինքն.** Մայրաքաղ. **Պրոսփէլ,** Բնակ. 173,469 Թիւ Բնակչաց Երկրին 5,258,821

Զօրութիւն Յամախայն

Սպարապէս. **Թիէպօլ** Զօրապէս.

Թիւ Սպայից 2,114 } 106,007. Թնդ. 240
» Զօրաց 103,893 }

Վաճառահանական Նաւք

Թիւ մեծ Շոգեհանուց 28 }
» » Առաքատաւորաց 41 } 332
Թիւ վոքր Նաւուց 263 }

Գ Ա Ն Զ

Նիւստուս Կառավարութ.

Հարկ	Կարուածոց	42,675,000
Եկամ.	Մահաւասանց	15,000,000
»	Ընդելեաց եւ այլ.	31,537,500
»	Դրոշմից - Արանագր.	51,275,000
»	Երկաքոյղեաց եւ ւի.	92,890,000
»	Թղթասանց եւ այլ sr.	8,115,100
»	Զանազանաց	1,540,000
	Գում. Ֆր.	243,032,600

Ծախք Կառավարութ.

Զինուորակ. Վարչութեան	42,461,400
Հանրական շինութեանց	82,438,553
Հասարակաց Կրթութեան	2,537,030
Վարչութեանց եւ Զանազ.	107,544,438
Արհմունեաց	3,300,000
Գում. Ֆր.	238,281,441

Աւելորդ 4,751,159 Ֆր.

Ընդհանուր պարտք Երկրին

Կայուն.....	1,068,920,205
Անկայուն.....	58,419,804
Գում. Ֆր.	1,127,040,009

Վահառականութիւն Արտաին

Թիւ	Վահառաքեր	Նաւուց	6,854,13,648
»	Վահառասար	»	6,794
Ելք	Ապրանաց	ճր.	2,164,900,000
Մուտք	»	»	2,424,800,000

ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԻՔ

ԳՆԱԾԻՔԱԿԱՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Դեսպան լիակատար **Բ. Հ. Տրերիմպէրի**
 Բարսուղար, Լ. Վերնեօկհէ.
 Թարգման Ա. Ս. Գալլիքիս.
 » Բ. Բ. Փրէզիօի.
 Հիւպատ. Ա. Բոպիկս. Թարգ. Չիչէկեան.

ՕՍՄԱՆԵԱՆ Ի ԳՐՈՒԹՅԷԼ

Դեսպան լիակ. **Է. Գարապէտսորի ԷՃ.**
 Բարսուղար, Ա. Ս. Գարապէտսորի ԷՃ.
 Սպայք, Հասան Ռիւսի եւ Նազիմ Պէյք.



Պ Ի Ր Մ Ա Ն

Պատմ. Այս երկիրն հնուց ի վեր անկախ եւ իսլամութեամբ կր կառավարուէր. ժամանակ մը Փէկուացոց լուծին սակ մնաց եւ յետոյ այս լուծը քոթուելով՝ անկախութիւնը դարձեալ ձեռք ձգեց ու հետզհետէ Սիամացոց Տերութիւնն իրեն հարկասու քաւ. բայց ի վերջոյ՝ ներքին պատերազմներով սկարացաւ եւ 1708 ին Սիամը կորսընցուց. ապա Փէկուացոց գրեթէ հարկասու եղաւ. իսկ 1754 ին Ալանիսա անուն մէկն երկիրն բոլոր Նանանգաց ու մինչեւ իսկ Փէկուին տրեց: Վերջերս Անգլիացիք ծովեզերեայ ֆալակները գրաւեցին:

Բացարձակ Միապետութիւն

Կրօնի պալատականի

Կայսր, Մեծնիկոս Գ.

Դրօշ. Կարգոյս, սիրամարտի պատկերօք.
 Ա. Նախարար **Լամբա** Մեհնիկ
 Բ. » **Խանանգալ** »

Մայրաք. Հին, Ավա — Անկեալ —
 » Նոր, Մանդլէ ԲՆ. 90,000
 » Այլ, Սամարապուր » 31,000
 » Այլ, Բանկուն » 28,000

Թիւ բնակչաց երկիրն. 4,000,000

Ռ Ռ Ս Ի Ս.



Պատմ. Հին Սարմասացոց եւ Սկիւ-
րացոց երկիրը կը համարուի այս, ուր
արեւած էին Ս. դարու մէջ Նախ Բան
գ-Քրիստոս, Հիւսիսային բնիկ Սլավի: Գ.
դարու մէջ Գոթացիք ալ արեւելցին եւ սո-
ցա անհետանալէն զկնի՝ 400 տարոյ չափ
բազմաթիւ Եւրասիոյ թեթաւութեանց կոխան եղաւ:
Երկիրս ուր 2. դարուն հազիւ մէկ Բանի
Բալթի, ինչպէս՝ Քիւր եւ Նովոկորոս, կը
տեսնուէին. Բուրիեանց Եւրասիոյ թիւնը
Նովոկորոսայ մէջ (862) զօրացաւ եւ Վլա-
սլաւիքի տեսն (988) Քրիստոնէութիւնն ալ
մուտ գտաւ երկիրս մէջ: Մոնկոլք արեւ-
ելցին եւ երկրին բազմաթիւ Եւրասիոյ
(բաց ի Մոսկովայիսն) նայասակեցունելով
Քալիջախաց Պետութիւնը հաստատեցին:

Ռուսիան Թաթարաց լուծը բոքուելէն
յետոյ՝ Միխայիլ Ռուսանովի պետութեան
(1643) տեսնէն սկսաւ՝ ուժեւորիլ ու Մեծիկ
Պետրոսիւ Կասարիսն Բ. ի (1682-1796)
ժամանակաց մէջ սուտել եւ զօրանա-
լով՝ ծաւալել իւր Եւրասիոյ թիւնը Պայրիկէ
մինչ ի Կասպից եւ ի Սեւա ծովերն: 1812ին
Յոաննայի անաւոր արեւմտացոց դիմադ-
րեց եւ ի վերջոյ Լեհաստանու, Կովկասեան
աշխարհաց եւ մինչեւ Մեծ Թաթարաստ-
անու վերայ տարածեց իւր տիրապետութիւնը:

Միապետական Կառավարութիւն

Կրօնի, Յունացաւանութիւն

Կայսր Ալեքսանդր Բ. Նիսիոյայէվիչ. Ծն.
17/29 ապր. 1818. — Գան. 18 փետր. 2 մարտ
1855. — Թագադր. 26 օգոստ. 7 սեպտ. 1856.
— Ամուսն. ընդ Մարիա Ալեքսանդրովնայ
(Ծն. 27 յուլ. 8 օգ. 1824) ի 16/28 ապր. 1841.

Որդին, **Ալեքսանդր Ալեքսանդրովիչ,**
Գահաժառանգ Եւրասիոյ. Ծն. ի 26 փետր.
10 մարտ 1845.

— Դոք. Տերունականն է դեղնագոյն ընդ
սեւա արծուէնաւ եւ պատերազմականն
սպիտակ ընդ դրանկեայ կապոյտ խաչի.
Իսկ հասարակն է եռագոյն. սպիտակ,
կապոյտ, կարմիր, հորիզօնական դրիւք:

Առաջին նախարար, Ս. Թիմաշեվ.	
Արս. գործոց » Ս. Կորչաֆով.	
Մայրաֆ. Փէրերգաուրկ, Բնկ. 667,026	
Մեծ քաղաք Մոսկովա »	611,970
» » Վարսովիա »	279,502
» » Օսէսա »	168,814
» » Բիբեկել »	103,043
» » Բիկա »	102,042
Թիւ Բնակչաց Ռուսիոյ	65,704,559
» » Լեհաստանի	6,026,421
» » Ֆինլանդիոյ	1,832,138
» » Կովկասու	4,893,352
» » Սիպերիոյ	3,428,867
» » Սիջնասիոյ	3,800,628

Գում. 85,685,645

Հայ բնակչաց թիւն էր 1861ին. 619,442.
Եւ ըստ այժմեայ տեղեկութեան 920,000

Զօրութիւն Մովային

Հրամանատար, Գոնցսանդին Մեծ Դուսն	
Բ.Ուաջին Սպայ, Ն. Գրաւ.	
Շոգենաւ Զրահաւոր (1) 34	} 221. Թ. Բ. 560
» Հատարակ (2) 91	
» Անգլ. փոխադրիչ 96	

(1) Սոցա 31ը Պայթիկի եւ 3ը Սեաւ ծովոց մէջ կը գտնուին :

2 Սոցա 44ը Պայթիկի՝ 26ը Սեաւ եւ 12ը Կասպից ծովոց, իսկ 9ը Արարտ լճի մէջ կը գտնուին :

Թիւ Սպայից	4,029	} Գում. 25,501
» Զօրաց	21,471	

Զօրութիւն ցամաքային

Սպարապետ, Տ. Միլուրին Զօրապետ.		
Թիւ Սպայից	44,477	} (1) 1,685,706
» Զօրաց	1,641,229	
» Թնդանօրից		2,606
» Երիվարաց		238,019

ԳՍՆՁ

Նկամուտ Կառավարութ.

Հարկ Կալուածոց Բուսլիի	131,476,861
Նկամ. Տրոց	212,181,620
» Մահասանց	54,538,000
» Տէրուն. Կալուածոց	52,062,409
» Այլեայլոց	409,102,603
Գում. Բուսլիի	559,361,193

Կովկասէ արտադրեալ էկամուտն է
6,948,727 Բուսլիի.

Մախ Կառավարութ.

Յամաքային Զօրութեան	158,479,029
Մովային	23,988,956

1 Ի սոցանէ 793,746ը սահմանաց հսկողութեան համար նշանակուած են, եւ հազիւ հազ կը բաւեն :

Կրօնից Վարչութեան	8,585,846
Հասարակաց Կրթութեան	14,620,041
Այլեւայլոց	341,542,562
Արժուներաց	8,888,976

Գում. Բուպի 556,105,410

Աւելորդ 3,225,783

Կովկասու համար եղած ծախսն է
3,727,125 Բուպի

Հնգհանուր պարսֆ երկրին

Կայուն, Արտաբին. Բուպ.	453,392,897
» Ներքին »	467,240,074
Անկայուն »	686,784,581
Թրքաղբամ »	802,162,444

Գում. Բուպ. 2,409,579,996

Վանառականութիւն Արտաբին

ԹիւՎանառաբեր Նաւուց	13,105	} 26,000
» Վանառասար »	12,901	
Ելք Ապրանաց. Բուպ.	359,014,000	
Մուսֆ » »	432,374,000	

ԳԵՍՊԱՆԱՏՈՒՆՔ

ՕՍՄԱՆԵԱՆ Ի ՓԷԹԷՐՁՊՈՒՐԿ

Գեապան լիակատար **Քաղաղի** Փառա.
Դիւանադպիր Թէվճիգ Պէյ.

Քարսուղար Ա.	Զիյա	Պէյ
» Բ.	Նահիս	»
» Գ.	Ռաուժ	»
Հիւպասու յՕսէսայ	Հալիլ	»
» ի Փօթի	Հասան Էֆէնսի.	
» ի Սօզում	գալէ Օսման Պէյ.	
» ի Թիվիս	Քարանա	»

ՌՈՒՍԱԿԱՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Գեապան լիակ. Ն. Իկնադիէվ	Զօրապէս
Խորհրդական,	Նէլիսով
Քարսուղար Ա.	Քալիմիսք
» Բ.	Պագիլի եւ Կուպասով.
» Գ.	Զերքէլէվ եւ Զիպին.
Թարգման Ա.	Օնու.
» Բ.	Մոսէլիէվ.
» Գ.	Պէլոճէֆովց, Արլիրոսսիուլ.
Օգնական Միրիսի,	Թէիքով եւ
	Նէվրուզ.
Սպայ զինուորական	Զէլոնին.

Ս Ի Ս Ս

Պատմ. Երկիրս քաղաքական պատմութիւնը Պրմանի Տերութեան հետ շատ կապակցութիւն ունի, որովհետեւ այս Տերութիւնն ի վաղուց հարկատու մնաց Պրմանցոց, եւ 1708 ին միայն կարողացաւ նոցա Գերիշխանական լուծը բոքուել: Այս մեծամիտ ժողովուրդը ժամանակ առ ժամանակ մեծ բաներ երազեց, բայց իւր բնական անյարմարութիւնն ու ծուլութիւնն ամեն բանի արգել եղան: Լոսովիկոս Ժ.Գ. ի ժամանակ *Կոստանդին Զալցոն* անուն բաղդախնդիր ու փառատէր Յոյնի մ' առաջնորդութեամբ դեսպան դրկեցին ի Ֆրանսա. բայց այս յարաբերութիւնը շատ չը տեսց: Երկիրս մէջ ամեն կրօնից ազատութիւն կայ, սակայն ճէզվիքաց ընթացիւք քարոզուած Քրիստոնէութիւնը՝ երբեմն կասկած եւ երբեմն հալածանք յարուցած է Երկիրս մէջ, ի վնաս Քրիստոնէութեան:

Բացարձակ Երկապետութիւն

Կրօնք Պոլսոյական.

Թագաւոր Ա. Ֆրաւար Սոմէրիս.
Որդի եւ Բ. Թագաւ. Քրօմա Ֆրարաչա.

— Դրօք. Կամիր ընդ սպիտակ պատերօք Փղի

Առաջին Նախարար. **Սուրիվոնկզի Արս. գործ.** » **Ֆուանկլանկ.**

Մայրաք. **Պանգօք.** Բնակիչ. 500,000
Թիւ բնակչաց Երկրին 6,300,000

Գ Ա Ն Ձ

Եկամ. (1) Կառավար. Տօլար 21,000,000
Շախտ » » 20,000,000

ԵՐԿԻՐԸ ՊԱՐՏԷ ԶՈՒՆԻ

Չօրութիւնք, Մոզային եւ Յամաքային
Մովապէս եւ Սպարապէս, **Քրայօհօմ.**
Թիւ մեծ եւ փոքր Նաւուց 14. Թնդ. 69.

Փոքրիկ բանակ մի կայ Արքային համար, որոյ Սպայք Եւրոպացի են. իսկ պատերազմի առնելու ամեն չափահաս եւ ազապ արուք կը պատրաստուին զինուիլ:

Վանառականութիւն Արսաբին

Թիւ Վանառասար Նաւուց..... 402
» Վանառաբեր » 484
Ելք Ապրանաց Տօլար 5,900,000
Սոմսք » » 4,600,000

(1) Պաշտօնակալաց ջոյց տուած զուճարն այս չափ է. սոցա համար որոշեալ ոսոթիկը մեծաւ մասամբ անվճար կը մընայ. սակայն իրենք՝ յափշտակութեամբ աւելին կը դիզեն եւ նոխտեան մէջ կ'ապրեն:

Ս Պ Ա Ն Ի Ս.



Պատմ. Հին Իբերիան է այս. ուր յայտնի չէ, թէ Փինդիկեցոցսէ առաջ որոնք կը բնակէին: Սա ստոյգ է որ Կարթագինեցիք խմբովին գաղթած ու սիրած են. իսկ Հռովմայեցոց սիրապետութիւնը Քրիստոսէ 225 տարի առաջ սկսած է մինչ ի 410 բուսականին տեւած է. ապա Գոթացիք են այլք սիրած են մինչ ի Գլովիս (507). յորմէ հետէ (711էն մինչ ի 1031) Արաբացիք, որոց Իբլանութիւնը թագէտ դադրած էր, բայց էւ այնպէս Նախաւի Թագաւորութեան, էւ այլեւայլ Նախարարութեանց հետ

Եւլանականք ալ կը գտնուէին մինչեւ ժՁ. դարուն. յորում Երկիրս Իբլանութիւնն ամիոպիւտելով՝ ոչ միայն Իսպիոյ էւ Հռոմանայի՝ ալ էւ (1580) Հարաւային Ամերիգայի (Մեքսիկա, Փերու, Բիլլի եւայն) մասերուն վերայ կը տարածէր. բայց այս անագին Տիրապետութիւնն հետզհետէ (Պապամուրթեան անոթի) կը քայքայէ եւ սորա Իբլանութեան ներքեւ գտնուող Երկիրներու բոլորն ալ (1609-1817) կ'անջատին: Սակայն այս դէպքերն ալ անագոյն կը մքնան ու ներքին կուսակցական պատերազմունք դեռ դադրած չեն երեւար:

Սահմանադր Կառավարութ.

Կրօնք կաթոլիկութիւն

Թագաւոր. Ալեօնս Ժ.Բ. Ծնեալ ի 28 նոյեմբ. 1857. Գահակ. 3 յունվ. 1875.

Դրօք. Դեղին, Էկեպոլովեայ կարմիր շերտով, հորիզօնական դիրք.

Առաջին Նախարար Ծովէլար Զօրայ.
Արս. գործ. » **Գագա Վալէնցիա**

Մայրաքաղաք Մասիս,	Բնակիչ	332,024
Մեծ	»	Պարցիլոնա » 189,948
»	»	Սէվիլլա 118,298
»	»	Վալէնցա » 107,703

Թիւ Բնակ .	Երկրին	16,835,506
» » Գաղթ. Գուպայի		1,400,000
» » » Փօրթորիցօի		625,000
» » » Ֆիլիպեան կղզ.		6,000,000
» Այլեայլ գաղթականութ.		69,410
		Գում. 24,929,916

Զօրութիւն Մովային

Շոգեմաւ Զահաւոր	6	} 125. Թնդ. 753
» Հասարակ	117	
Նաւ Առագաստաւոր	2	

Մովայեան, Տուրանի և Լիբիա.

Թիւ Սպայից.....	398	} 49,500
» Զօրաց.....	49,102	

Զօրութիւն Ցամափային

Թիւ Սպայիցի ի խաղ.	1,990	} 91,400
» Զօրաց »	89,410	
» Զօրաց ի պատերազմի	216,000	

Գ Ա Ն 2

Սկամառ Կառավարութ.

Հարկ Կալուածոց	Ֆր. 151,184,565
Տուրք Անուղղակի	» 110,826,986
Սկամ. Ծխեղի, Դրուսի	» 91,565,765
» Վիճակահանութ.	» 41,145,107
» Ազգ. Կալուածոց.	» 57,912,771
» Այլեայլոց	» 92,159,557

Գում. Ֆր. 544,794,751

Մօխ Կառավարութ.

Մովային Զօրութեան	Ֆր. 32,811,776
Ցամափային »	» 245,731,957
Հանազանաց	» 319,249,336
Արհունեաց	7,332,500

Գում. Ֆր. 605,125,569

Բաց 60,584,428 Ֆր.

Ընդհանուր պարտք երկրին

Կալուն	8,627,951,512
Անվար.....	484,287,918
Անկալուն.....	1,008,045,790

Գում. Ֆր. 10,120,285,220

Վանառականութիւն Արսաբին

Թիւ Ելեանող Նաւաց	2,867
Ել Ապրանաց	400,750,000
Մուտք »	95,500,000

ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԻՐ

ՕՍՄԱՆԵԱՆ Ի ՄԱՏԻՅՏ

Հիւպատոս ընդհանր. Ֆ. ի սէ **Արկերիցի**
» ի Պարցէլոնա, Լ. Պրտոլիսիւն.

ՍՊԱՆԱԿԱՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Դեպպան լիակատար, **Տօն Ա. Գօթ.**
Քարտուղար, Տօն Անկէլ Բուաթա.
Թարգման, Լ. Մարիլիս.
Հիւպատոս, ընդհանր. Բախաս.

ՏՍ. Ն Ի Մ Ս. Բ Գ Ս.



Պատմ. Ի սկզբան այս երկրի բնակիչք էին Գոքացիք, Կիմերացիք, Անկլեզք եւ այլք, որոնք Վոսան Աշխսկր (Հայր աննեցուն) անուն շատուած մը կը պաշտէին Սոխա է. դարուն վերջերէն սկսան ծովասպասակութեամբ ապրիլ եւ բնկերակցութեամբ Նորվեկիացոց եւրոպիոյ ամեն կողմերն հետզհետեւ արեւուել: Յետոյ՝ զԱնգլիան (878էն 1041) երկու անգամ գրեթէ բոլորովին նուանեցին: Արդէն Մեծ Կարողոսի դէմ սաստիկ կռուած եւ անոր լուծի սակ բնկած ասեցնին Քրիստոնէութիւնը մոտ զսաճ եւ այս երկրին մէջ: Ժամանակէ յետոյ՝ առաւել եւս զօրանալով՝ Շուէտի եւ Նորվեկիոյ իսկ իրեցին. յետոյ Շուէտի մասը կորուսին: ԺԶ. դարուն մէջ

Բողոքականութիւնն իր ամենայն բնորոշակութեամբ բնորոնեցին եւ այդ պատճառաւ եղած պատերազմաց մասնակցեցան: 1814ին կորուսին Նորվեկիոյ մասը եւ անկողնեցան Տանիմարկայի մէջ եւ որ յս օրէ զարգացան: 1848էն ի վեր Սանմանադրական Կառավարութիւն կազմեցին:

Սահմանադր. Կառավարութիւն

Կրօնք բողոքականութիւն

Քաղաք. Քրիստիան Թ. Ծն. 8 ապր. 1818. — Գահակ. 15 նոյ. 1863. — Սմոսն. բնդ. *Լուիզ Վիլհելմինայ* Եւսանուհուն Հէսսի. (Ծն. 7 սեպ. 1817) ի 26 մայ. 1842.

Արդին, Քրիստիան Ֆրէժերիկ, Գահաժառանգ Եւսան, Ծն. 3 յունիս 1843.

Դրօք կարմիր բնդ խաչի սպիտակաւ.

Առաջին Նախարար, **Յ. Պ. Ս. Էսթրոն:** փ. Արս. գործ. Կոմս **Մօլթէ** սք **Պրէկլէնզլէ**

Մայրաք.	Քօթենհակ,	Բնակիչ	216,000
Թիւ	Բնակչ. երկրին		4,874,000
»	»	Անգլիկան կղզեաց	37,700
»	»	Այլւայլ կղզեաց	91,500
		Գում:	2,219,200

Զօրութիւն Ծովային

Շոգեմալ Զահաւոր	6	} 65. Թնդան. 249
» Զասարակ	27	
Նաւ Առաջասաւոր	4	
» Միջին եւ փոքր	28	

Ծովային, Ֆ. Լ. Ֆ. Սօմմեր.

Թիւ Սպայից	417	} 917
» Զօրաց	800	

Զօրութիւն Ցամաքային

Սպարապետ Փ. Զարճէկաբէրի Զօրվար.		
Թիւ Սպայից, ի խաղաղ.	1377	} 37,352
» Զօրաց, »	35,975	
Թիւ Զօրաց ի պատերազմի	52,666	

Գ Ա Ն Զ

Եկամուտ Կառավարութ.

Հարկ Անշարժ Կալուածոց	44,254,698
Տուրէ Ծարժական »	36,626,800
Եկամ. Թղթասանց, Շփհրաս.	4,367,059
» ԵւՎիսականահանութեանց	
» Տէրունական գործոց	6,428,225
» » Կալուածոց	1,944,855
» Այլեւայլոց	3,415,734

Գում. Ֆր. 63,734,371

Ծախք Կառավարութեան

Ծովային Զօրութեան	6,164,079
Ցամաքային »	12,227,232
Զասարակաց Կրթութեան.	3,139,462
Հանազանաց	42,466,053
Արհմնեաց	1,400,000
Գում. Ֆր.	65,396,826

Բաց 4,662,455 Ֆր.


Ընդհանուր պատք Երկրին

Երբին եւ Արսաբին 77,227,579 Ֆր.

Վանառականութիւն Արսաբին

Թիւ Վանառասար Նաւուց	24,499
» Վանառաբեր »	23,535
Գում. Նաւուց	47,734

Ելք Սպրանաց	Ֆր. 461,509,000
Մուտք »	» 149,630,000
Գում. Ֆր.	281,439,000



Փ Օ Ր Թ Ո Ւ Կ Ա Ն



Պատմ. Հին Լուսիսանիան է այս, որոյ քաղաքական կազմութիւնը Հռոմայեցոց արշավանքէն (195 Ն. Ք. զՔս.) յերեւան երած է, եւ որ պատմութեամբն Սպանիոյ յարակից է ըստ մասին. սակայն այս երկիրն Սպանիայէն շատ աւելի կընդդիմանայ եւ 140 ին (Ն Ք. զՔ.) հազիւ կը նշուանի ի Հռոմայեցոց. որոց լուծը 570 տարւոյ շաւի կըլինէ յետոյ՝ երկիրս այլ եւ այլ Իսլամութեանց եւ ապա Աւարացոց (711) Տիրապետութեան սակ կ'ընկնի եւ առաւել քան զՍպանիա՝ կը մընայ սորաներէն. սակայն այս լուծը 1095 ին կը բոբուէ եւ կըսկսի օրօսուի զօրանայ: Եւս առաւել կը զօրանայ 1385-1531ի տեսն,

նոր երկիրներ՝ Ափրիկէի, Հնդկաստանու կողմերն՝ մանաւանդ Պրագիլիայն գտնելով, եւ առաջինը կը լինի՝ թէ հարսութեամբ եւ թէ ծովային զօրութեամբ մինչ ի 1580: Յետոյ Սպանիոյ սակ կ'ընկնի, բայց նորս լուծն ալ բոբուելով 1640 ին իւր անկախութիւնը վերսին կ'ըստանայ. ի վերջոյ Պրագիլիացիք երկիրս զահածաւանց իրենց կայսր կ'ընտրեն 1822 ին եւ Սայր երկրի Գեղեցխանութենէն կ'անջատուին:

Սահմանաբ. Կառավարութիւն

Կրօնք կաթոլիկութիւն

Թագաւոր. Լուի Ա. Ծն. 31 հոկ. 1838. — Գահակ. 11 նոյ. 1861. — Ամուսն. ընդ **Մարի-Պիայ** Իսլամոստոյն Իսպիոյ. ի 6 հոկտեմբեր 1862.

Ռոյին. Շարլ-Ֆէրտինան, Գահածաւանց Իսլամ. Ծն. 28 սեպտեմբեր 1863.

— **Դրօշ.** Կապոյտ եւ սպիտակ, ընդ Տէրունական նշանաւ:

Առաջին նախարար. **Ֆ. Փ. ԵՊ Մէլլո.** Արս. զործ. » **Ս. Նիւրստէ Գորվո.**

Մայրաքաղաք **Լիզպոն,** Բնակ. 224,063

Մեծ Բաղաբ Փորքո	Բնակ.	89,494
»	Պրակա	» 19,514
»	Գոյիմպրա	» 18,117
Թիւ Բնակ. Երկրին		4,390,589
»	Ափրիկէի Գաղթ.	2,308,884
»	Հնդկ. Ասիոյ »	949,256
	Գումար.	7,648,729

Զօրութիւն Ծովային

Ծովապետ, ՏՄԱՆՏՐԱՏ Գործօ.	
Հրամանատար, սր Սուրէս Ֆուսիգօ.	
Շոգեհաւ Զրահաւոր	3
» Հասարակ շք	42. Թնդ. 198
Շաւ Առաջատար	13

Թիւ Սպայից.....	318	3,277
» Զօրաց	2959	

Զօրութիւն Ցամախային

Ա. Հրամանատար, սր Սպլանհա.	
Թիւ Սպայից ի խաղ. 1506	33399 Թնդ. 36
» Զօրաց » 31893	
» Երիվարաց	
Թիւ Սպայից ի պլուս. 2458	73145. Թնդ. 126
» Զօրաց » 70687	
» Երիվարաց	

Գ Ա Ն Ձ

Եկամուտ Կառավարութ.

Ի հարկաց եւ ի սրոց Երկ. Ֆր.	144,692,884
» Գաղթականութ. »	12,406,182
Գում. Ֆր.	154,099,066

Ծախք Կառավարութ.

Զօրութեանց եւ այլոց Ֆր.	144,732,107
Գաղթականութեանց »	11,812,620
Արհմեաց »	3,500,000
Գում. Ֆր.	160,044,727

Ընդհանուր պատք Երկրին

1,944,271,878 Ֆր.

Վաճառականութիւն Արտաքին

Թիւ Վաճառաբեր Նաւուց	9,659
» Վաճառատար »	11,118
Ելք Ապրանաց Ֆր.	142,234,000
Մուտք »	178,245,000

ՀԻՊՈՏԱՐԱՆԲ

ՕՍՄԱՆԵԱՆ Ի ԼԻԶՊՈՆ

Հիւպատոս ընդհանր. **Յ.** վան **Զէլեր**
 Գործոպաւեսն Ի Կ. Պօլսոս
 Հիւպատոս ընդհանր. **Յ. Սուրսաւի**

Ֆ Ր Ա Ն Ս Ս.



Պատմ. Հին Գալլիա, որոյ պատմութիւնը երկրացոց արեւանկէն (587 Ն. Բ. գ. Բ.) կրակսի, որոնք Գերմանիոյ, Իսպանոյ եւ մինչեւ Սարոյ (Գաղաշիոյ) կողմեր կր փախն, եւ Հռոմէացիացոց դէմ ընդերկար պատերազմել յետոյ վերջապէս կր նուանին եւ Երկիրն անբողջապէս կրնկնի հոցա Իսլանուքեան տակ. մինչեւ Գլովիս Մերովինկեան հոգ Թագաւորի տեն, որ Ֆրանկաց արեւանկի գլուխն անցած կր վանէ գլուխմայեցիս ու կր սիրէ (486) Երկիրն եւ իւր Ազգին անուեր կուտայ ա-

նոր: Գարովէնկեան (752-987), Գալիէ-եան (987-1793) եւ ապա Հանրապետութիւնն (1793-1804) յաջորդաբար հետզհետէ զօրանալով Ֆրանսան կրժողկեցնեն. իսկ այս վերջոյն տենէն է որ Երկիրս կրակսի հսկայախալ յառաջ ընթանալ եւ զարգանալ ըստ ամեկայնի. սակայն Պոնափառ քեանց Եկրորդ Իսլանուքեան (1859-70) տեն Երկրացի կր բուլանան ու Գերմանացոցս (1870-71) յաղթուելով Գաւառներ եւ Միլիտարաւոր ժաւնգներ կր տուեն. իսկ նոր Հանրապետութեան ներքեւ դարձեալ կր ժին եւ զուցէ անտուէլ եւս փան որ էին յառաջմանէ:

Հանրապետական Կառավարութիւն
 Կրօնի Կարողիկութիւն

Նախագահ. **Մագ—Մառոն** զուս Գանէնքայի. Ընտրեալ Նախագահ 20 նոյեմբ. 1873:

— Գրօ. Նաւազոյն, Կապոյտ, Սպիտակ եւ Կարմիր, ուղահայեաց դրիւս:

Առաջին Նախարար տր **Մարտր.**
 Արս. զորոնց » Գուս Գրօպ.

Մայրաքաղ. Փարիզ, Բնակիչ. 1,851,792

Մեծ Բաղաբ.	Լիօն	323,417
»	Մարսիլեա	312,864
»	Պոնսո	194,055
»	Լիլ	158,117
»	Թուլուզ	124,852
»	Նանդ	118,547
»	Սէնթ-Էթիէն	110,814
»	Ռուան	102,480
Թիւ բնակչ.	Երկրին	36,102,921
»	Ալճերիոյ	2,146,225
» Գաղղ.	Հնդկաստանի	266,308
»	Չինաստանի	1,335,842
»	Գալէսոնիոյ	64,200
»	Սէնէկամպիոյ	435,289
»	Ամերիգայի	349,554
	Գում.	40,700,339

Զօրութիւն Մովսային

Մովսայէս Մարիի ք **Մօնթէնեազ**
 Շոգենաւ Զահաւոր 57 } 232. Թնդ. 774
 » Հասարակ 175 }

Թիւ Սպայից 2,515 }
 » Զօրաց 23,667 } 26,182

Զօրութիւն Յամախային

Սպարապէտ, Ժէնէրալ (գօրավար) **Պէրօ.**
 Ի խաղաղութան
 Թիւ Սպայից 27,0176 } 490,323. Թնդ. 437
 » Զօրաց 463,30 } 59,025
 » Երկվարաց 1,797,531
 Թիւ Զօրաց, ի պատերազմի
 » Երկվարաց 96,165

Գ Ա Ն Ձ

Եկամտս Կառավարութ.

Հարկ Կարուածոց	407,408,700
» Եկամտից	619,489,345
Եկամ. Մահաւանց	236,933,250
» Անտառաց	38,064,680
» Ընդէկեաց Եւայլն	998,615,455
» Շարժական գոյից	35,174,000
» Թղթար. Եւ Նվիրոց	126,756,000
» Ալճերիոյ	23,708,100
» Գաղղականութեանց	7,764,659
» Այլեւայլոց	81,114,423
	Գում. ժր. 2,575,028,582

Մախ Կառավարութ.

Մովսային Զօրութեան	165,893,496
Յամախային »	500,038,445
Տոկոսեաց	1,150,375,050
Մասնաւոր վարձատրութ.	22,898,231

Հանրական ժնուրեանց	161,405,138
Հասարակաց Կրթութեան	38,220,445
Կրօնից եւ անգարանաց	60,420,125
Եկեղազորմութ. եւ Վանձակ.	19,136,500
Ներքին գործոց	112,214,715
Արտաքին »	11,255,500
Զանազանաց	328,048,228
Նախագահին	900,000

Գում. ճր. 2,570,505,513

Աւելորդ 4,523,069 ճր.

Ընդհանուր պարտք Երկրին

Կայուն	19,900,206,933
Անկայուն	124,776,34
Պայմանաժամեայ	3,378,016,721

Գում. ճր. 23,403,000,000

Վանձառականութիւն Արտաքին

Թիւ Վանձառասարձաւուց	36,421,71,700
» Վանձառաբեր »	35,279,
Եւ Ապրանաց	37,873,000,000
Սուտք »	35,518,000,000

ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԻՐ

ՕՍՏԱՆԵԱՆ Ի ՔԱՐԻՉ

Դեսպան Լիակասար, Ա. ի Փաշա.

Քարտուղար Ա. Նասրի - Ֆէհիմ Պէյ
 » Բ. Ֆէհիմ եւ Րիզա Պէյ
 Զինուորակ. Սպայի, Հիւսնի եւ Շախիր »
 Գիւանապետ, Նօկէզ Էմէնի

ՅԲԱՆՍԻԱԿԱՆ Ի Կ. ՊՕԼԻՍ

Դեսպան Լիակաս. (Կոնս) Տր Պարկոն.
 Քարտուղար Ա. Տր Սոլյ.
 » Բ. Տր Լաթուր Սօպուրկ.
 » Գ. Տր Փրօքիվիլ.
 Թարգման Ա. Տր Լօնկվիլ.
 » Բ. Պէլէն, Բօպլէ
 Ռուհօն.
 » Գ. Ռուէ.



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԻՍՂԱՔԱԿԱՆ

Յուլիս 1874

10. Գերման. Բրուսիա. Մարտին եպիսկոպոսն Փատերպորնի՝ կը մերժէ ներկայանալ դատական Ատենին այն խնդրոց համար, որ կրօնից միայն կը վերաբերին. հետեւաբար Քաղաքական Ատենաներն անձեռնհաս են կրօնականը դատելու :

11. Ամերիգա. Մօնժէվիտիօի և Ռիօ-Կանտիի հեռագրական թելերը կցուելով՝ շիրական հաղորդակցութիւնը կսկսի, Լա-Փլաթայի նոյնպէս և հարաւային Ամերիգայի արեւմտեան եզերաց ու Եւրոպայի մէջ : — Երբոր այս ահագին ատրամոնտեան մէջ՝ լուրերուն վայրկեան առ վայրկեան իրարու հաղորդուիլը կը տեսնեմք, չենք կրնար նաև այն զիւրութիւնները չը յիշել, զորս կը վայելեն յայտ մասին այս երկու լուսաւորեալ Աշխարհաց բնակիչք, ուր փողոցէ ի փողոց, տնէ ի տուն, խա-



նուծէ ի խանութ և խցէ ի խուց Հարց ու Պատասխան կը հաղորդուին . որոնցմէ բոլորովին զուրկ են Արեւելիք և պիտի մնան այնպէս՝ մինչև որ Երկրի զարգացման գործերն իրականութիւն զգենուն: Սակայն ներելի չէ փափաքիլն, որ (մեծամեծ վնասուց առաջին առնելու համար) զոնէ Կ. Պօլսոյ մէջ, ուր հրդեհն ստեպ կը պատահի, ամենակարեւորն ի գործ դնէին և հրկիզութեան ուր ըլլալն իմացնելու համար՝ ժողովուրդը պէկնիներուն տրնկըլ տտտիկին սպասել չը տային . . . —:

12. Ա. մե. Վէճեցուէա. Մերիտայի եպիսկոպոսն՝ քաղաքական ամուսնութեան վերաբերեալ նորահաստատ օրինաց ընդդիմութիւն ընելով՝ ապօրէն ընծացք կը բռնէ: Կառավարութիւնն ալ այս առթիւ կը ձերբակալէ զայն և Երկրի սահմաններէն կ'արտաքսէ: — Ծռովութեան համար աշխարհք և կող խուճր՝ կ'երեւի Թէ՛ ամեն խնդրոց մէջ ճարակ կ'որոնէ և կը գտնէ:—

13. Գեւմ. Պաւիւա. Քիսիւնկէնի մէջ՝ Քուլմանն անուն անձ մի ատրճանակ կը պարպէ Պիզմարք իշխանին վերայ և անոր ձեռքը միայն կը վիրաւորէ:

15. Ս. սիա. Զինաց և ձափօնի կառավարութեանց մէջ խռովութիւն կը ծագի,

ձախնեան զօրաց Ֆորձօզա կղզին զլուելնուն պատճառաւ:

21. Գեւմ. Քուսիա. Քուլմաննի հարցաքննութենէն յերեւան կելնէ, որ Պիզմարք իշխանն սպաննելու խորհուրդը պապական Ընկերութեանց կողմանէ ծրնունդ առած է. այս յայտնութեան առթիւ Կառավարութիւնն կ'արգելու բոլոր պապական Ընկերութիւններն ու ժողովները: — Այս տեսակ մարդիկ եօձնազուխ առասպելական օձի կը նմանին, որոյ զլիսոց մէկը եծէ կտրես՝ անոր տեղ երկուք կը բուսնին, եծէ այն երկուքն ալ կտրես, չորս, եծէ չորսն ալ կտրես՝ ուծ, և այսպէս քանի կտրես կը կրկնուի. ըսել է որ քանի երթան պիտի բազմանան. իսկ եծէ Քրուսիոյ կառավարութիւնն յաջողի, առանց խարելու, զլուխ ելնել՝ Սէմիլա վէ թանա. իսկ եծէ ոչ՝ խոհեմութիւնը կը պահանջէ որ հիմակուլնէ սկսի ամրապնդել և ինք զինքը պաշտպանողական զրից մէջ պահել. այնչափ սպառնալից և վտանգաւոր դիրք մը բռնած է այս պապական զրուլիւնն:—

27. Պէլնիզա. Պատերազմի ատեն՝ ընդհանուր ազանց և մարդկութեան վերաբերեալ իրաւանց վերայ խորհելու և այս խնդրոյն նկատմամբ օրէնք հաստատելու

համար՝ Ռուսաց Կայսեր կողմանէ՛ առաջարկուած՝ Համազգային ժողով մը կը զուժարի Պրիւքսէլի մէջ, յորում կը մասնակցին Եւրոպական (բայց ի Մեծ Բրիտանիոյ) բոլոր կառավարութիւնք: — Թէպէտ անսպասելի, բայց և այնպէս՝ երեւի Թէ 1870ի պատերազմին մէջ տեղի ունեցած արիւնոսուշտ անգթութիւնք՝ զգալի տպաւորութիւն ըրած են բոլոր Թագադրաց՝ մանաւանդ Ռուսաց Կայսեր վերայ: Մեղանշանքի դէմ օրէնք ղենելն ուրիշ նշանակութիւն չունի՝ բայց եթէ անոր էութիւնը նախ ճանաչել, և հետեւաբար՝ անոր դէմ պատուար բաշել: Փափաքելի էր որ՝ ոչ մին ի գործ պլուէր և ոչ միւսովն արգիլուէր. բանգի, ինչո՛ւ մեղանշանք և ինչո՛ւ օրէնք. . . Սոյն տեսութեամբ իրաւունք ունի մարդս ալ՝ երեւակայական ապագայի մը վերայ խորհելով մտածել յիւրովի՝ Թէ երբ ժամանակ մի գայ, յորում մարդիկ, Թէպէտ լուսաւորութեան զէնիթն հասած՝ բայց և այնպէս պարտաւորած լինէին՝ մեծամեծ բանակներ կազմելով ճակատ առ ճակատ գալ և յարձակման նշանի տուենն արձանանալով՝ սուսերբն ալ ի պատենի՝ հարցընէին Թագաւորաց, Թէ ինչ է Զերխնդիր, որոյ համար հաւարած էք զմեզ

աստ. Բացադրեցէք և խաղաղարնր լինիք. Ապս Թէ ոչ՝ զո՛ւք կամ երկրորդ մարտնչեցէք. . . Արդեօք ինչ պիտի ըսէին այդ պատերազմի օրէնք ղնողներն. . . Պատասխանը Թող ընծերցոյն երեւակայէ. բայց մեք սն միայն չեմք ուզեր չըսել՝ որ եթէ խուժական առիթները վերնան՝ օրինաց կարօտութիւնն ալ, յայտ մասին, միանգամայն կ'անհետանայ —:

ՅՕ. Սպանիա. Ամսոյս սկիզբէն ի վեր Գառլտեանք կը զօրանան ու մէկ քանի բաղաբներու կը փրկեն:

Օգոստոս 1874

1. Ամեր. Միաց. Նահ. Կրանթ զօրավար կը յառաջադրէ իր երրորդական ընտրելիութիւնը ի Նախագահութիւն: — Ուաշինկթըն ականաւոր Զօրավարի առաքինութիւնն առաւել ևս կը փայլի յայտ մասին, որ ոչ միայն մերժեց այս երրորդական ընտրութիւնը՝ այլ և Երկրիս ապագայն միապետական իշխանութենէ բոլորովին զերծ պահելու մտօք՝ երկարասեւեծ խառնուրեան դէմ Օրինական պատուար մի դրաւ. որով Նախագահ մի ոչ միայն չը կրնար երրորդաբար ընտրուիլ՝ այլ և ընտրելի անգամ չը կրնար հանդիսանալ —:

2. Ամեր. Մէֆսիա. Ետքանդան եպիսկոպոսն կը բռնադրէ այն ամեն Կաթողիկէներն, որ քաղաքական ամուսնութեան օրինաց կը հպատակին: Այս առթիւ Քուկրոյայի, Լակուածէզոյի և այլ քաղաքաց մէջ խռովութիւն կ'ելնէ և ամեն տեսակ ամբարշտութիւն ի գործ կը զրուին, Կեցցէ կաթողիկութիւն գոռուճով: — Եւ որ առթի մէջ խռովութիւն չեն քարոզած՝ այս Քարոնեան պաշտօնեայր, Աստուած իմ—:

11. Ֆռանգա. Պազէն (Երբեմն Մարաշախտ-Չօրափար) իւր (ՍէնՍ Մարկրիտ կրգւոյ) բանտէն կը փախի: — Մարդ ալ որ ըսես, այս է եղեր. տես թէ ինչ վարդետութեամբ իր պահապանները բլօսօփօրմեց և ամրապատ ու ծովապատ բերդը ծակեց ու կծիկը դրաւ. իսկ մեր՝ թէ՛ ժողովրդեան իրաւանց արածօնութիւնն ըստանձնել ուզող Կրօնական ժողովոյն և թէ Ուսումնական ժողովարանի զրան վարագուրներն անգամ չկրցինք վերցնել, որ կարենայինք անարգել լոյս և օդ ծծել. —:

19. Առուիա. Կառավարութիւնն չուզեր յարիլ այլ Կառավարութեանց և կը մերժէ Սէնուանոյի (Սպանիոյ) նոր Կառավարութիւնը ճանաչելն: — Այդպիսի հանրապետական Կառավարութիւն մ'ընդունեն-

լու համար՝ փոքր ի շատէ՛ նազ ընելն ալ՝ շիտակն ըսելով՝ մեղանշանք չընամարուիր:

20. Ամեր. Միաց. Նահ. Հանրապետականք ի ժողով կը զուճարին Փանսիլվանիոյ մէջ և բողոք կը բառնան ընդդէմ Երրորդական ընտրելութեանն Կրանթի:

22. Գերմ. Քրուսիա. Քեթլըր եպիսկոպոսն Մայանսի՝ հրաման կընէ իւր վիճակի ժողովրդեան, որ Սէտանի տարեդարձի հանդիսին չմասնակցին. քանզի, կըսէ, Սէտանի յաղթութիւնը ոչ թէ Ֆրանսացւոց այլ ուղղակի պապական կրօնին դէմ կատարուած է: — Ըսել կուզէ որ՝ յաղթուողը չէ թէ Ֆրանսան՝ այլ յոյն իսկ պապականութիւնն էր. այս ալ գէշ բան չէ. ուրեմն Երանի պաշտեալմուղաց ընդդէմ անսխալական վարդապետութեան, զի նորա որդիք Աստուծոյ կոչեսցին: —:

26. Սպանիա. Մարաշախտ Սէնուանոյի Նոխագահական իշխանութիւնը ամեն Կառավարութեանց կողմանէ (բաց ի Ռուսիայէն) կընդունուի:

29. Չինաստանու և ճարօնի հարաւային կողմերն ահաւոր թաժառ մի յերեւան կ'ելնէ. ահագին շէնքեր, մեծ ու փոքր և մինչև անգամ Չրահաւոր նաւեր կը բանդէ ու կ'անհետացնէ:

Սեպտեմբեր 1874

1 Ա. Ազգիստ. Յոսան-Մասունական Մեծ ժողովարանի նախագահն, Մարքի տը Ռիփոն, Պապական կրօնքը կընդունի, և այս կրօնախորհուրդները մեծ ազդեցութիւն կը պատճառէ: — Այս տեսակ մարդոց ուրիշ բան չի մնար՝ բայց և՛ է՛ ծակ բար անուն այագմային ալ ուխտ մ'ընել, և անկէց դէպ ի յաւիտենականութիւն անցնիլ: Սա Եւրոպան ալ շատ քօհա՞՞ երկիր է, ամեն օր խելթէ՛ մտքէ՛ չանցած լուրերով մարդս կըզբաղեցնէ, երբեմն Պուտոտայականութիւն և երբեմն Այլ... կրօնք ընդունելով՝ կարծես թէ կը ճարակի: Թող փառք տան Հայերն որ աղարթիկ վիճակի մէջ կ'ապրին, ապա թէ ո՛չ՝ այսպիսի վտանքներէն երբէք ազատելիք չունենին... —:

5. Ջախցեա. 19 Պապական կղերք կը լուծուին իւրեանց սրտտունն, սահմանազրուեան պահանջած երգումը գլխաւորուն պատճառանօք: — Եւ մի՞թէ՛ կրօնը են սոքա՞՞ ծառայել երկուց (պատրական և յառաջադիմական) սկզբունց:

7. Վերջ. Բրուսիա. Մարթէն՝ Եպիսկոպոսն Փատրիարքին կը հրաւիրուի Վէսֆալիոյ գերագոյն նախագահն, որ իւր

պաշտօնէն հրաժարի. բայց Եպիսկոպոսն կը մերժէ այս առաջարկութիւնը:

21. Վերջ. Բրուսիա. Մարթէն՝ Եպիսկոպոսն Փատրիարքին՝ բրբռիչ կոնդակ մի կը հրատարակէ, և այս յանցանօք բառամեայ բանատրկութեան կը դատապարտի, ամրապատ բերդի մը մէջ:

24. Ռուսիա. Կառավարութիւնն կարգիլով՝ Վարշաւոյ մէջ բացուելիք Երկրագործական Հանդիսին բացումը, առարկելով որ Լեհացոց այդ քաղաքն հաւ բուելէն կրնայ ապստամբական շարժում գոյանալ: — Թուսսէր Հայոց համբերութիւն, ոյժ և կարողութիւն կը մաղթեմք, յուսալով մանաւանդ՝ թէ զնյո ևս չեն մոռանար. իւրեանց Ամենազորեմական ցուցակին մէջ փառաօրոպէս զետեղելու: Եւ դու, Մեակաղբեր, հր չես մշակում և զայս... —:

Հոկտեմբեր 1874

4. Պելիքիա Ռիստաւորաց անագին բազմութիւն մի, ընդ որս Արքեպիսկոպոսն և բոլոր եպիսկոպոսներ Երկրիս, կը հաւաքուին ի Հայ, ուր Արքեպիսկոպոսն՝ տեղոյս Աստուածածնայ տրճանի զլխուն պսակ ղնելով՝ կ'աղաչէ զՆա և կը խնդրէ Անկէ որ սրբազան Պապի համար յատուկ

Հրաւճ մի գործելու շնորհն ընէ : — Երբ խենդուծիւնն այս աստիճանի հասած է , Աշխարհք ալ կը վկայէ , որ ասոնք՝ ստուգիւ կարօտուծիւն ունին Հրաւճի — :

» **Գեւմ. Բրուսիա.** Արնիմ կոմսն , (նախկին ղեսպան Գերմանիոյ ի Փարիզ) կը ձերբակալի բարձրագոյն Ատենի Նախագահին հրամանաւ , ինչ ինչ պաշտօնական գրուածիւններ յինքն կորզելոյն յանցանօք :

» **Սպանիա.** Կառավարուծիւնը բողոք կը բառնայ Ֆրանսայի Կառավարուծեան դէմ . Բառլոսեանները բաշալերելուն համար :

9. Զուլցեբա. Թղթատարուծեանց վերաբերեալ Համազգային ժողովն իր գործն ի կատար հանելով՝ կը ստորագրէ որոշեալ խնդրոց արձանագրուածիւնքը . Ստորագրողը կը ներկայացընեն՝ Թուրքիայն , Անգլիայն , Ամերիքայի Միացեալ Նահանքը , Աւստրիայն , Պելճիբայն , Տանըմարբայն , Եգիպտոսն , Սպանիայն , Իտալիայն , Շուէտ և Նորվեկիայն , Հոլանտայն , Փորթոկալն , Հէլլադայն և Ռումանիայն :

17. Սպանիա. Բառլոսեանք իրունի բերդը կը ուժրակոծեն :

» **Տանըմարբա.** Ազգային ժողովն ,

հակառակ Նախարարական բողոքին , կընդունի այն առաջարկուծիւնը , որ ազնուականուծեան պատուանուան և աստիճանի արտօնուծեանց շնջմանը կը վերաբերի : — Աղամայ որդոց մտքէն անգամ անցած չէր , թէ ապազային մէջ իրենց ցեղէն այնպիսի անձինք պիտի ելնեն , որ իրենք զիրենք՝ գերբնական էակներու տեղ զնելէն զկնի՝ պիտի դժկամակին նաև իրենց բնական ցեղերը ճանաչելու և անոնց յարելու :

29. Գեւմ. Պաիէա. Պիզմարք իշխանին վրայ ատրճանակ պարսպող Բուլմանն չորեքտասանամեայ բուռն աշխատանաց կը դատապարտի :

31. Ասիա. Չինաց և ձափօնի Կառավարուծիւնք Ֆորմօզա կղզւոյ խնդրոյն վերաբերեալ զաշնագիր մի կը ստորագրեն , որով Չինաց գերիշխանուծիւնը վերստին կը հաստատուի , յիշեալ կղզւոյն նկատմամբ :

» **Աւուստր-Հանկար.** Պղնձեայ և Բուրի պողպատեայ Սնդանօթից համեմատական տարբերուծիւնքը յերևան հանելու համար՝ օրերով ուժրաձակուծեան փորձեր կը լինին . և Գերմանական բանակին մէջ գործածուած Բուրբանն Սնդանօթից առաւելուծիւնը կը հաստատուի :

Նոյեմբեր 1871

16. Ֆուսուա. Մէն գաւառին ընդհանուր ժողովն՝ դաստիարակութեան պատարօրիչ լինելուն սկզբունքը կընդունի և ընդունելութեան վճիռը կուտայ: — Երանի թէ հաստատութիւն գտնելը, և այս յուսալից ու կազդուրիչ սկզբունքն ալ՝ Հայք ու ամեն Ազինք ընդունէին: —

28. Սպանիա. Տօն Ալֆօնսի (Ելիզապէթ գահազուրկ Թագուհոյն որդին) կուսակիցք՝ Ազգային ժողովոյն մէջ մեծագոյն մաս կազմելուն առթիւ՝ Սպանիոյ Մեծամեծք ուղերձ կը գրեն Տօն Ալֆօնսին, յորում և թագաւոր անուամբ կ'ողջունեն զնա: — Եւ սվ կըսէ թէ Գարլօսեանց ալ վառօղ չը դրկեցին... —

Դեկտեմբեր 1871

1. Հնդկաստան. Անգլիական տեսչութեան Անդամք որ Պէնկալայի սովելոց օգնութեան պաշտօնն ըստանձնած էին, տարօրինակ աշխատութեամբ՝ զարմանալի միջոցներ ձեռք առնելէն ու Պէնկալայի աշխարհը երկամուղիներով զարդարելէն, մտակարար 15,000,000 սովեալ ազատելէն յետոյ՝ պաշտօնին կը կատարեն ու

զոհունակութեամբ կը լուծուին: — Այս նաշխարհիկ և մարդավայել առաքինութեան վերայ խօսելն աւելորդ կը համարիմք, բանի որ բոլոր Թրքաստանցիք ինքնին կը վկայեն՝ բոլոր լուսաւորեալ Ազանց զՊասրտութեանն որոյ ականատես վկաններ եղած են Փոքր Ասիոյ սովատանջութեան ժամանակին: —

3. Ասիա. Ճափօնեան զօրախումբը բոլորովին կը բաշուի Ֆորմօզա կղզիէն:

4. Սպանիա. Սէռոանօ կը մեկնի Մատրիսէն և պատերազմին դաշտը կը ժամանէ: — Դու միայն կաս յԵրուսաղէմ, Գնչդ Սէռոանօ, Պաշտօնէիցդ և ժողովականներուդ մեծ մասը սքեմաւորաց զործարանը մտած, ու անոնց պատրաստած պայծուցիկ նիւթերով խուցսախ կը շինեն զբեզ հանրապետութեամբդ, յ զս հանելու:

7-8. Սպանիա. Հօմա զօրավարն կը յարձակի Գառլօսեանց բանակին վերայ, Թօլօզայի մօտ, և վերջապէս յետս կընկըրկի. բայց Գառլօսեանք յառաջանալու առիթը կը փոխցունեն և օգուտ չեն բաղեր:

9. Թուրքիա. Եզիպտոսի Խըտիլն զինու զօրութեամբ կը գրուէ Տարֆուրի (5,000,000 բնակչօք) երկիրը:

11. Սպանիա. Գերմանական վաճա-

ուստար Կիւստավ անուն նաւ մի, փոծորկի բռնուելով Սպանիոյ եզերաց կը մտնայ. Գարչօսեանք զայն տատանեալ վիճակի մէջ տեսնելով՝ ումբ կը յարձակեն անոր վերայ և խրեցընելէ յետոյ՝ անոր մէջի վաճառքն ու զոյքն ամբողջապէս կը յափըշտակեն. — Պէտք չէ որ մարդ զարմանայ այս տեսակ անգթութեան վերայ. բաւական է զիտնալ թէ հարուածողը պապական է և հարուածեալը բողոքական. և թէ ի զուր ըսուած չէ՝ թէ Արտաքոյ Պապականութեան չիք փրկութիւն — :

19. Բրուսիա. Արնիմ կոմսն երեք ամսոյ բանտարկութեան կը դատապարտի. բայց և այնպէս իւր դատը բարձրագոյն Ատենին կը ներկայացունէ :

20. Իսպիա. Երեսփոխանական ժողովոյն մէջ յատուկ բռնէարկութեամբ որոշումն կը տրուի, Կարիպալտի Զօրավարին յատկացեալ նուիրատուութիւն մ'ընելու համար. իսկ Կարիպալտին այս նուիրատուութիւնը չընդունիր :

21. Զուիցերա. Ազգային ժողովն՝ քաղաքական ամուսնութիւնը կը հաստատէ և անոր վերաբերեալ օրինաց վճիռը տալէն յետոյ կը ցրուի :

22. Սպանիա. Մուրվիէտրոյի մէջ,

Մարդինէզ Գամիսոս զօրավարն (ծէզուի-Թաց մարդը) Սպանիոյ Թագաւոր կը հրատարակէ զԱլֆօնս Իշխանն :

30. Սպանիա. Նախարարք յայտարարութիւն կը հանեն ընդդէմ Ալֆօնսեան դաւաճանաց. սակայն Մատրիտ քաղաքի զօրապետն ալ Ալֆօնսեան կը հրատարակէ զինքն. Նախարարք դաւաղրութիւնն այս վիճակին մէջ տեսնելով իսկոյն իրենց պաշտօնէն կը հրաժարին :

31. Սպանիա. Զօրքն ամեն տեղ կը բարեւէ զԱլֆօնս՝ իբրեւ Թագաւոր Սպանիոյ և նոր Նախարարութիւն կը կազմուի, ինամակալ անուամբ. իսկ ժողովրդեան սիրելին Սէռոանո՝ Ֆոանսա կը բաշուի ձէզուիԹաց կենազրու դարաններէն հեռանալու համար : — Այս այն ժողովուրդն է որ երբեմն իբրեւ փրկիչ ողջունած էր զՍեռոանո Քանի որ ժողովրդեան վառումն ամէն հովէ կը շիջանի՝ ձէզուի-Թաց պետութիւնն ալ յաւիտեան պիտի տեսէ. հետեւաբար՝ մարդկութիւնն ալ լոյս տեսնելիք չունի — :

Յուլիս 1875

1. Ամեր. Մէքսիգա. Պապական կրօնաւորներու կողմանէ յարուցեալ վի-

Տարանուծեանց ամբիւ՝ սոսկալի անգթու-
 թիւններ տեղի կ'ունենան. Ազիսժա-Հէր-
 ժօզայի մէջ ալ բողոքական Հովիւ մը
 կըստպաննուի և Ազափուլզօյի Հնդիկները
 կը գրգռին Բողոքականաց ղէմ: — Ստոյգն
 ասելով ղեռ համազուած չեմ (կարծեմ թէ
 համոզուելիք ալ չունիմ) որ այս դժոխաց
 Բարսպակս, ոչ թէ Ամերիկա՝ ալ և Եր-
 կիրն ալ երթան, այն տեղն ալ անդադար
 պիտի շարունակեն իրենց սկզբան յատ-
 կացեալ խոտովութիւնքը: —

2. Սպանիա. Ալֆօնս իշխանն Սպա-
 նիոյ Թագաւոր կը հրատարակի ի պաշտօ-
 նէ: — Ամենայն ինչ կատարեալ է.
 Որդիք Լօյօլայի, Աչքերնիդ լնյս, ալ աշ-
 խարհքը կրնաք ձեր սեպմականուծիւնն
 համարիլ, միայն սա տարբերուծեամբ՝ որ
 ինչպէս ժամանակը՝ նոյնպէս և ձեր երկ-
 ւակայած դարերն անցան և անդառնալի
 կերպիւ հեռացան և տակաւին հեռանալու
 վրայ են: —

3. Սպանիա. Խնամակալ Նախարար-
 ութիւնն օտար Տէրութեանց կը հաղորդէ
 Սպանիոյ նոր վիճակը, մասնաւոր շրջաբե-
 րականաւ:

Ե Ասիա. Չինաց Կայսրն այսօր կը
 վախճանի:

4. Աւստր — Հոնկար. Սկիզբն դա-
 տին, յորում Օֆընհէյմ ամբաստանի:

5. Գերմ. Բրուսիա. Մարթէն Եպիս-
 կօպոսն Փատէրպօրնի՝ կրօնական խնդրոց
 պատճառանօք իւր պաշտօնէն կը ձգուի,
 բարձրագոյն Ատենի վճռով: — Տարակոյս
 չկայ որ յիշեալ Եպիսկոպոսն՝ Աւետարանի
 պատգամին թիւր մեկնութիւն տալով՝ սն
 ըստ ըլլայ մարտը թէ՛ Երանի որ հալած-
 եալ իցեն վասն պապականութեան, զի
 նոցա է արքայութիւնն Երկնից:

9. Սպանիա. Ալֆօնս նոր Թագաւորն
 Սպանիոյ կը ժամանէ ի Պարցըլօնա:

19. Գերմ. Բրուսիա. Փատէր-
 պօրնի Եպիսկոպոսն կը ձերբակալի և վէ-
 սէլի բերդին մէջ կը բանտարկի: — Եւ ով
 կը տարակուսի՞ թէ այս Եպիսկոպոսն ուխտ
 ըրած չը լինի՝ աշխարհիս մէջի պապական
 չեղող բոլոր իշխաններն ու Թագաւորներն
 այս բերդին մէջ ցկեանս չը բանտարկելու,
 իր իշխանութեան հասած վայրկենին: —

20. Անգլիա. Արտաքին գործոց
 պաշտօնեայն կը գրէ Փէթէրզպօրկի Անգ-
 լիական Դեսպանին, թէ Անգլիան չէ կա-
 բող մասնակցիլ՝ Ռուսաց Կայսեր առա-
 ջարկած համազգային այն ժողովոյն, որոյ
 նպատակն պիտի լինի պտտանելիք պա-

տերազմաց վերաբերեալ նոր օրէնք հաստատել. բանի որ Անգլիան չուզէր՝ ոչ պատերազմները դիւրացնելով օրինօք բաշայերել զանոնք և ոչ Հայրենիքը պաշտպանել ուզող ազատասէր ժողովրդեան մը հայրենասիրութիւնը արգիլել: — Կեցցես, Անգլիա. Մենք զիտէինք և զիտենք որ բոյ լուսամիտ ժողովրդեան սկզբունքն այդ է. Երանի թէ բոլոր պաշտնատեարքայ այդ սկզբան իրապէս Թարգման կենսային միշտ ու մնային այնպէս —:

22. Սպանիա. Թագաւորն ապրտամբաց հրաման կընէ որ զէնքերնին ձգեն:

25. Գերմ. Բուսիա. Ընդհանուր ժողովն իր բուէով կը հաստատէ բազարական ամուսնութեան վերաբերեալ օրէնքը:

28. Գերմ. Պաիէռա. Եպիսկոպոսունք ի ժողով կը զուսարին և բոլոր մի կուզղեն Թագաւորին, ընդդէմ հաստատութեան բազարական ամուսնութեան: — Ի՞նչ նշանակութիւն ունի, որ ամուսնական սրբութենէ զրկեալ խոււրք մը Արեղայք իրենց վերաբերութիւն չունեցող խնդրոյն մէջ՝ այս աստիճան կամակորութեամբ և հոգեով մարմնով կը նետուին. բայց սա ևս չմոռնամք յիշել, թէ մարդիկ սոցա ըրածին խելք հաստեցած չունին—:

Փետրվար 1875

3. Սպանիա. Թագաւորն իր բանակի զլուխն անցնելով՝ կը յարձակի Գաւթունանց վերայ. բայց թէ ի Լուզոս և թէ ի Լագաու կը յաջութի չարաչար. իսկ Գաւթունանք շատ կը տընտընան և այս առթէն բաղելիք օգուանին կը կորուսանեն:

5. Իսպիա. Հատմայ Պապն իր նոր շրջաբերականաւ կը բաշայերէ Բրուսիոյ մէջ պաշտօն վարող բոլոր Եպիսկոպոսները պատուիրելով Ճանաւանդ՝ որ Կառավարութեան օրինաց դէմ մինչև ցարդ ըրած ընդդիմութիւննին շարունակեն, ամենայն զօրութեամբ: — Աստուածային պատուէրներն այս Պապական հրահանգին բովանչուշտ՝ աննշան բանեյ պիտի համարուին Եպիսկոպոսաց աչքին —:

8. Սպանիա. Բազարական խնդրոց վերաբերեալ ժողովներ կազմելը կ'արդիւլուի ի պաշտօնէ:

9. « Բաղարային ամուսնութեան օրէնքը կը չնչուի: — Եւ ո՞վ կը տարակուսի որ Լոյսոյանան սրեմաւորք այսպիսի օրինաւոր ամուսնութենէ չեն զայթաղիր —:

12. Իսպիա. Կարիպալտի զօրավարն իրեն անաջարկուած նուիրատուութեան

Թիւնը վերջապէս կընդունի, բայց այն պայմանաւ միայն, որ այդ գումարին մեծ մասը երկրին օգտակար համարեալ բանի մը գործածուի. և այս առթիւ տառաջարկութիւն կընէ որ Տիբեր գետը մաքրուի և անոր ճանքաներն ուղղուելով նաւարկութիւնն ալ այնչափ դիւրանայ որ նաւերը կարենան մերձենալ մինչ ի Հոովմքաղաք:

16. Ամեր Միաց Նահ. Վաւերացումն նորոգ դաշնագրոյն ի Ծերակուտէ, որ ի մէջ Թուրքիոյ և Միացեալ Նահանգաց, ի մասին հպատակութեանց խնդրոյն:

20. Ամեր Միաց Նահ. Տեղեկագիր Շէրիտան զօրավարին ի Լուզինեան Նահանգէ, որով ծանուցանէ թէ այն երկրին մէջ (1866էն ի վեր) քաղաքական կարծեաց պառճառանօր տարանելոց Թիւն 21 է ի և վիրաւորելոցն 2115 ի հասած են:

— Ասոր գէշ բան ըլլալուն՝ մանրդ չկայ որ տարակուսի. բայց Հայերուն ալ՝ բարբարոսաց առջեւն առանց պաշտպանողական պըճըրտուք մի ցոյց տալու և ոչխարի պէս անոնց դանակին ճիտ մատուցանելու սովորութեանը, շիտակն ըսելով, խելք չըկարացի հասցունել զնանց —:

23. Ապանիա. Սրբազան Պապն օրհնալից ու սիրալիր նամակ մի կը զրէ

Նոր Թագաւորին, որով Նորին Վեհափառութեան գահակալութեան աւետիսին վըրայ զգացած անպատում ուրախութիւնը յայտնելով՝ ապագային մէջ ալ Կաթոլիկութեան նպաստաւոր յոյսեր կը տածէ: — Սրբազան Պապի սրբազնագոյն պարտաւորութիւնն ալ, ըստ մեր ամենախոնարհ կարծեաց, զայդ կը պահանջէր —:

25. Անգլիա. Կոմս Տէրպի կը յայտարարէ ժողովոյն, թէ Ռուսիա, Բրուսիա և Աւստրիա՝ Ռուսմանիոյ և Սէրվիոյ հետ ընելիք առեւտրական դաշնադրութիւննին ի կատար պիտի հանեն առանց Բարձրագոյն Դրան հրամանի:

26. Ապանիա. Դառլոսեանք կը յարձակին Պիլպոս քաղաքին վերայ բայց ընդդիմութեան սաստիկութեանէն յետս կընկրկին:

27. Աւուստ. Հոնկար. Վերջ դատին, յորում Օքընհէյմ արձակի:

28. Ապանիա. Հատարակաց Դատարակութեան վերաբերեալ ազատական օրէնքը կը ջնջուի. — Մեր կարծիքն այն է, թէ ճէզուլիթներն տուակել առաքինութեան համար՝ բան Սէպուանօսի վրէժխնդիր հանդիսանալու դիտաւորութեամբ (?) աշխատած ըլլալու են, այդ ազատութիւնն ի պաշտանէ ջնջելու —:

Մարտ. 1875.

17. Աւստրիա. Պապին անսխալու-
 միւնը չընդունող մասն անկախ Եկեղեցի
 կը կազմուի, ընդ անուամբ նախնական
 Կաթողիկի, որոյ Եկեղեցական կանոնաց
 ծրագիրն ալ կը վաւերանայ Երեսօրհաս-
 նական ժողովոյն կողմանէ: — ԵՊէ ստանք
 ալ սովորութիւն ունին Պապը յիշատակե-
 լու, Մերոնց հետ ձեռք ձեռքի կրնան տալ
 և ապրիլ եղբայրարար՝ հակոտնապատ վան-
 քերու մէջ: —

23. Զուիցերա. Պապն իր անսխա-
 լական վարդապետութիւնը չընդունողն ու
 նախնական Կաթողիկ անուանեալ մասը
 կը բանադրէ, մասնաւոր կոնգակաւ, որով
 և իւր Եպիսկոպոսաց պատուէր տալով
 կը բաշխէրէ զանոնք, որ հոգւով չամ
 հակառակին՝ Քէ Ազգային ժողովոյն և Քէ
 Կառավարութեան այն որոշմանց ղէմ յո-
 րոնք բազարական ամուսնութեան խնդրոյն
 կը վերաբերին: — Սա երանելի մարդն ալ
 բանի որ անսխալականութեան վիճակին
 ախրացաւ, սխալականութեան ճանկերէն
 չի պրծաւ զնաց. . . — :

25. Ապանիա. Լոզ Ռիսզի Դասա-
 տուն բողոք կը բառնայ, դաստիարակու-

Սեան վերաբերեալ ազատական օրինաց
 շնորհան ղէմ, բայց ի զիշերայն կը ձերբա-
 կալի և Սպանիոյ սանձաններէն դուրս
 բանտարգելութեան կը դատաւարտի: —
 Անիւելը մարդ, ալ բան չը գտնար բողո-
 քելու, Քող Աւետարանի ղէմ բողոքէիր, որ
 ձեզուիմաց Թագաւորութիւնն ստղէնը՝
 Աբրուիւնն ալ անղէնը վայելէիր. . . — :

Ապրիլ 1875.

1 Ապանիա. Դառլուեան զօրականք
 Դառլու իշխանէն խոյս տալով՝ կըսկսին
 ցրուիլ և նոր Արքային հնազանդիլ: —
 Ապրիլի ձուկերն ալ այսպէս՝ երբեմն
 Դառլուեանց կը խարուին և երբեմն Ալ-
 ֆոնսեանց. . . Մարդ ի պատուի էր և ոչ
 խնացաւ, հաւատարեցաւ ձկնոց և տըլլայից
 և նմանեցաւ նոցա: — :

5. Ապանիա. ձեզուիմաց ընկե-
 րութեան ծառանգաւորաց պարոյներն (որ
 1868էն ի վեր ի պաշտօնէ փակուած էին)
 արտօնութիւն կըստանան ու վերստին կը
 բացուին: — Երեւի թէ ձեզուիմական անի-
 ծաձըգութիւնը՝ Սպանիոյ կլիմային մաս-
 նաւոր և յաւիտենական շատկութիւնն է: —

5-6. Իսպանիա. Աւստրիոյ Կայսրն ու
 Իտալիոյ Թագաւորն զիրար բարեւելու

համար Վէնէտիկ կը ժամանեն, և փոխադարձ այցելութեամբ երկարօրէն կը տեսակցին. որոց հետ կը գտնուին նաև Անտրասի Կոման ու Վիսգոնդի Վէնտուզա, Արտաքին գործոց Նախարարքն:

9. Ապանիա. Հասարակաց դատարարակութեան սկզբունքը պաշտպանող Դասատուք խմբովին ղուրս կ'արտաբտին Սպանիոյ սահմաններէն:

22. Իտալիա. Բրուսիոյ զահածաւանգ Իշխանն այցելութիւն կընէ Իտալիոյ Թագաւորին, Նախօրի քաղաքին մէջ:

25. Թուրքիա. Հիւսէյին Ալիսի փաշան Եգարբոսութենէ կ'իյնայ և էսաստ փաշա Նոյն պաշտօնին կը հասնի:

28. Անգլիա. Կալլէսի զահածաւանգ Իշխանն, որ 25 սեպտ. 1874 ին Անգղիական Ֆրանս-Մասնաց Մեծ-Պիս ընտրուած էր, իւր պաշտօնին վերայ կը հաստատուի:

Մայիս 1875.

3. Ա. սսր. Հոնկ. Գարատապի Իշխանն Նիքիոյ՝ այցելութիւն կընէ Կոյսեր:

7. Ա. սսր. — Բիլի. Համպուրկի Մեծ Ովկիանեան Սղծատար՝ Շիլլէր անուն շոգենաւն ալեկաճութեան հանդիպելով՝

կը խրի 2իտէ կղզոյն մօտ և անոր մէջի 355էն 312 հոգին կը կորնչի:

8. Պելքիսա. Լիէժի մէջ տեղի ունեցած կրօնական հանդիսաւոր Քափօրները կ'արգիլուին, քաղաքային ժողովոյն կողմանէ:

10. Գերմ. Բուսիա. Ռուսաց կայսր Ալեքսանդր Բ. կը ժամանէ Ի Պէրլին:

12. Թուրքիա. Իզմիրի կողմերն երկրաշարժ կը պատահի և 2000ի չափ հոգի կը կորնչին:

13. Միաց. Նահանգք. Նիւ-Եօրքի Օրէնսդիր ժողովն որոշում կուտայ հարկադրել զԿառավարութիւն, որ Գուպա կղզոյն պատերազմին վերջ տալու միջոց մը խորհելով անոր անկախութեանն ալ նկատէ: — Հաւատալ ոչէտք է թէ ո՛ր և է ժողովուրդը կամ Ազգ, իբրև մարդ տպրելու համար՝ կամ լուսաւորեալ դրոցի և կամ դրացին լուսաւորելոյ յատկութիւնն ունենալու է: Յաւելով կը հաստատեմք, թէ Հայք՝ այս երկուքէն ալ զուրկ են. քանզի չէ տեսնուած մէկ աշխարհական կամ զունէ կրօնական, որ ըսէ Քրիստոս՝ թէ զուր մէկ սեռէ սերած և ազգակից էք. ուրեմն ինչո՞ւ եղբայր զեղբոր արիւնը կըծծէ. . . Ո՛վ դուք, որ Քրիստոսի պաշտօնեայ կ'անուա-

նէք զձեզ և Հայոց փրկիչ կը հանդիսանաք, ետէ ստուգիւ այդ է ձեր պաշտօնն՝ աւետարանեցէք այդ երկու Ազգակից մողովուրդը. ապա թէ ոչ Հայուն ու Քուրդին փրկութիւն չկայ, և ձեզ բաժին պիտի մնայ միմիայն ապագային ցատումք. . . . :

» **Գեղ. Բուսիա.** Բորչարօք Իշխանն նեազգրական շրջաբերականաւ կիմացիէ (Պէտլիսէն) բոլոր Թոս Դեպտանայ՝ Թէ Թուսիոյ Կայսրն ըստ ամենայնի ապահովութիւն առած է Գերմանիոյ Կայսրէն, ի մասին ընդհանրական ինտղադումեան և այնպէս մեկնած է Պէտլիսէն: — Շատ աղէկ, բայց փոփաբեղի էր որ այն ալ իմացուեր թէ Թուսիան ալ այդ ինտղադումեան ապահովութիւնը տուած էր Գերմանիոյ Կայսրը: —

15. Եսէ-ճարլիկիա. Կառավարութեան կողմանէ զինուորականութեան վերաբերեալ ինտիլին (որ 180,000 զօրք և 7¹/₂ է 12 ամիս ծառայութիւն կը սրահանջէր) Երեսփոխանական ժողովէն կը մերժուի. և անոր փոխարէն՝ կորաշուի, որ միայն 80,000 զօրք ըլլայ և անոնց ծառայութիւնը 3 ամիս տեւէ: — Ինչ կակիկ Երեսփոխանութիւն և ինչ կակիկ որոշումն: Տես թէ ինչպէս զանձն իր դրամը կը պա-

նէ. երկրագործութիւնն իր մշակներէն չի զրկուիր. տարուան մէջ ալ 520,000 մարդ զինուորական կը թուութիւն կ'անուն և հայրենեաց ու իրական պաշտպան կը հանդիսանան: Պէտք է հաստատուի թէ Աստիտան իմաստութիւնը միայն եւրոպացոց և ամերիցացոց պուտ է: —

21. Պելլիսիա. Պրիմարը Իշխանը կենացրաւ ընելու կոտիւած անոց ասկ ձեռքուած Տիւշէն անուն անձին բնութիւնը լրանալով՝ անոր անմեղութիւնը կը հաստատուի և բանտէն կ'ործակուի — Սովորութիւն է որ յանցաւորը կը պատմեն, բայց անմեղին ինչ հատուցում կընեն. մի զուցէ օրէնքն ալ (ինչպէս սովորութիւն է Ասիոյ մէջ) կ'աւակածի ենթորկեալ անձին անմեղութիւնն իսկ անոր բուշած նեղութեանցն ու չարչարանացն հատուցումն հաւտարելով « Է՛ն ալ այն բանտին մէջ բան մը չունիս Տըրտու. Լէրդ լոյս. յանցանք չունիս եղեր. ելիր զնա՝ ըսէ. . . , և այն անողորմութիւնը կորուսած իսկծը, առանց զոնէ բարոյական հատուցման, դուրս ձգէ: Եթէ այդպէս է, տարակոյս չկայ, որ զօրաւորագոյնք աշխարհք սրաբասի վերայ կ'աւակած յայտնելու իրաւունք պիտի ունենան. . . . : —

23. Զուիցեա. Ժողովրդեան 21285՛ է բուէով բարաբական ամուսնութեան խընդրոյ վճիռը կը վաւերանայ, և Պապական կոնդակին հակառակ՝ Ազգային ժողովոյն 1874 ղեկտ. 24ի վճիռն օրինաւորութեան կարգը կ'անցնի: — Հիմա այսբան մարդը սխալեցնողն՝ անսխալ կրնայ համարուիլ՝ հոգիդ ու արեղ սիրես —:

25. Գերմ. Պաւիւռա. Յորելեան հանդիսի Թափօրը կ'արգիլուի Կառավարութեան կողմանէ: (տես Յունիս 4):

27. » Յորելինի Պապական Թողութեան հանդէսն ալ Կառավարութեան կողմանէ կ'արգիլուի:

30. Պեկնիզա. Ամսոյս մէջ՝ Թէ ուխտաւորաց խոնութեան և թէ հանդիսաւոր Թափօրներու արգիլմանց պատճառաւ՝ Երկրիս ամեն կողմերը շփոթութիւն կը ծագի և խռովութիւնը տեղի կունենան, երկու մաս ժողովրդեան մէջ: — Եւ որ ինչպցի հեծանոսն է այն, որ հրաշից կարօտ պաղպականն այս վիճակին տիրացած տեսնելով՝ ուզէ դիմել ի Բրիտտոնէութիւն: Տես Թէ կրօնից խանութպանութիւնն որ աստիճան կը մաքառի ընդդէմ ճշմարիտ Բրիտտոնէութեան —:

31. Ռուսիա. Պաշտօնական վիճա-

կազրութենէն յերեան կ'ելնէ Թէ յոյն օրօսօփսներուն քանակութիւնը կարի նուազած ու գրեթէ բոլորովին անհետանալու վրայ է: — Այս խնդիրն էլ Մշակից ենք յանձնու՛մ, որ մաղէ անցունելով բուն պատճառներն իմանայ և իւր Կոնկլիւզիօնն իմացընէ Հայերին—:

Յունիս 1875

Ասիա. Պերմանի Թագաւորն Անգլիացի ղեսպան մի կընդունի և Արեւմտեան գաւառաց մէկ մասին անկախութիւնը կըտորագրէ:

2. Ամեր. Միաց. Նահ. Օնիօի մէջ հանրապետականաց ժողով մի որոշում կուտայ առաջարկել Նախագահ Կրանթին որ Ուաշինկթընի օրինակին հետեւելով երրորդական ընտրութիւնը մերժէ և այնչափին զօհանալով հեռանայ կառավարական գործէն և առանձնանայ:

4. Գերմ. Պոս. Եկեղեցեաց բակերէն դուրս կատարուած կրօնական հանդէսներն ու Թափօրները կարգիլուին Կառավարութեան կողմանէ: — Արդարութիւնն կը պահանջէ՝ որ այլոց ական շիւղը նշանակած տտեննիս՝ մերինին զերանն ալ անտես չառնեմք. քանզի հանդէսներու և

